

Պայքարի աշխատանքների կազմակերպումը և սրսկման ու փոշոտման տեխնիկան

Վնասատուների և հիվանդությունների դեմ կիրառվող քիմիական և մանրէակենսաբանական միջոցներից առավել արդյունք ստանալու համար, անհրաժեշտ է ճշտորեն հաշվի առնել վնասակար օրգանիզմների կենսաբանական առանձնահատկությունները, պատրաստուկների հատկությունները և եղանակային պայմանները:

Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես կախված է քիմիական և մանրէակենսաբանական միջոցների ճիշտ ընտրությունից, պայքարի օպտիմալ ժամկետների և պատրաստուկների համար սահմանված ծախսման նորմաների պահպանումից, կիրառման եղանակից, մշակումների կրկնողություններից և այլն: Նայած սպասարկող սրսկիչ մեքենաների քանակին և հզորությանը, պետք է ունենալ անհրաժեշտ թվով տարողություններ՝ բանվորական հեղուկ պատրաստելու համար, ինչպես նաև կշեռք՝ փոշի թունանյութերը կշռելու, հեղուկաչափ, մաղեր՝ բանվորական հեղուկը քամելու համար:

Սրսկումից կամ փոշոտումից առաջ հարկավոր է ստուգել համապատասխան մեքենաների և սարքավորումների վիճակը և կարգավորել նրանց աշխատանքը՝ փորձնական փորձարկումներ կատարելու միջոցով:

Թրջվող փոշիներից սրսկման համար բանվորական հեղուկ պատրաստելու համար, կշռում են պահանջվող քանակությամբ պատրաստուկ, բաց անում մի քիչ ջրի մեջ և խառնում այնքան, որ դառնա մածուխանման զանգված, ապա քիչ-քիչ ավելացնում են հաշվարկով պահանջվող մնացած ջուրը և անընդհատ խառնելով լցնում սրսկիչի բաքը:

Հանքային և խտացված էմուլսիաներից, կախույթներից սրսկման համար բանվորական հեղուկների պատրաստումն անհրաժեշտ է կատարել սրսկիչի բաքում խառնիչի օգնությամբ:

Բազմամյա տնկարկներում վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը կախված է նաև բանվորական հեղուկի կիրառման տեխնիկայից: Օրինակ, թիվ 30 պատրաստուկով տնկարկները սրսկելիս պետք է առատ թրջել ծառերի վրա ձմեռած վնասատուների օջախները:

Տանձենու տերևալվիկների դեմ լավագույն արդյունքի հասնելու համար հարկավոր է տնկարկները սրսկել առատ շիթով:

Խնձորենու բրդապատ լվիճի դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու համար անհրաժեշտ է սրսկումները կատարել փողրավոր սրսկիչներով, ապահովելով բանվորական հեղուկի առատ նեղ շիթ՝ լվիճների վրայից մուսթելիկների ծածկոցը հեռացնելու և մարմնի արտաքին մակերեսի և թունանյութի հետ կոնտակտ ապահովելու նպատակով:

Պետք է գիտենալ, որ խնձորենու, արևելյան և սալորենու պտղակերների և խաղողի ողկուզակերի դեմ պայքարի քիմիական միջոցներն արդյունավետ են միայն այն դեպքում, երբ օգտագործվում են ձվերից փրփուրների դուրս գալու պահին: Պտուղների մեջ մտնելուց հետո նրանք անխոցելի են դառնում գործադրված պատրաստուկների նկատմամբ:

Առաջնահերթ նշանակություն ունի պայքարի քիմիական միջոցների նկատմամբ վնասատուների դիմացկուն պոպուլյացիաների առաջացումը կանխելու նպատակով (հատկապես մեկ վեգետացիայի ընթացքում մեծ թվով սերունդներ տվող վնասատուների մոտ՝ ինչպիսիք են տզերը) տարբեր ազդող նյութ ունեցող թունանյութերի, որոշակի հաջորդականությամբ, փոխեփոխ կիրառումը:

Բորդոյան հեղուկով, պղնձի օքսիքլորիդով, արցերիդով, տուբարիդով, դելանով, ռիդոմիլ-ՄՑ-ով, ռիդոմիլ գոլդ ՄՑ-ով, սկորով, միկալով, ֆունդազոլով, տոպսին-Մ-ով, բայլետոնով, տոպագով սրսկումներն անհրաժեշտ է կատարել այնպես, որ հեղուկի կաթիլները լինեն մանր և հավասարաչափ ծածկեն բույսերի մակերեսը:

Անթույլատրելի է, երբ վազերը ուժեղ սրսկում են բորդոյան հեղուկով, որի հետևանքով տերևների հերձանցքերը փակվում են, որից դժվարանում է նրանց ասիմիլացիան ու գազափոխանակությունը:

Նկատի ունենալով այն, որ միլդիուի վարակը տեղի է ունենում հերձանցքների միջոցով, որոնք գտնվում են հիմնականում տերևների հակառակ երեսին, հետևապես սրսկումների ժամանակ անհրաժեշտ է հեղուկով ծածկել ոչ միայն տերևի վերևի, այլև հակառակ երեսը:

Պատրաստի բանվորական հեղուկները սրսկման համար պետք է օգտագործել նույն օրը: Որպես կանոն, վնասատուների և հիվանդությունների դեմ յուրաքանչյուր սրսկում պետք է ավարտել 1-2 օրում:

Խաղողի տնկարկները աղացած ծծմբով անհրաժեշտ է փոշոտել այնպես, որ ծծմբի մասնիկները հավասարապես ու բոլոր կողմերից ծածկեն վազերի տերևները, շվերը, ողկոյզները: Փոշոտումը կատարել առավոտյան վաղ ժամերին, նախօրոք կանոնավորված փոշոտիչներով: Շոգ օրերին, երբ աղացած ծծումբը խաղողի պտուղների մակերեսին ընկնում է կույտերով (ոչ հավասարաչափ)՝ կարող է առաջացնել նուրբ ցանցաձև այրվածքներ՝ խցանացման ձևով: